ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/18511/02/21
Նախագահող դատավոր՝ Դ. Սերոբյան
Դատավորներ՝ Մ. Հարթենյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/18511/02/21**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 15-ին

գրավոր ընթացակարգով քննելով Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.03.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Ալեքսիս Լոեբերի հայցի ընդդեմ Նախարարության՝ արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը հաստատելու և ոչ նյութական վնասը հատուցելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ալեքսիս Լոեբերը պահանջել է ճանաչել իր՝ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով պատասխանող և հակընդդեմ հայցով հայցվոր Ալեքսիս Լոեբերի արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը, որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.07.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.03.2023 թվականին որոշել է «Ալեքսիս Լոեբերի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.07.2022թ. վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ. «Ալեքսիս Լոեբերի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության՝ արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը հաստատելու և պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջների մասին, բավարարել մասնակի. Հաստատել Ալեքսիս Լոեբերի արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը: Հայաստանի Հանրապետությունից՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից Ալեքսիս Լոեբերի օգտին բռնագանձել 500,000.00 ՀՀ դրամ՝ որպես Ալեքսիս Լոեբերի արդար դատաքննության իրավունքի խախտման համար պատճառված ոչ նյութական վնասի գումար»»:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը (ներկայացուցիչ Հայկ Հարությունյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ալեքսիս Լոեբերը (ներկայացուցիչ Կարեն Մեջլումյան):

<u>2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 162.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 1087.2-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածը, 58-րդ հոդվածի 1-ին մասը, 59-րդ հոդվածի 1-ին մասը, 62-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Հաշվի առնելով թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով նշանակված դատական նիստերը հետաձգելու պատճառները և գործի դատավարական ընթացքը՝ ինքը նշել է, որ դրանք իրականացվել են՝ պայմանավորված դատավարական գործառույթներով և կողմերի վարքագծով, ինչպես նաև նիստը նախագահող դատավորի հարգելի բացակայության պայմաններում, այսինքն՝ հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որ տվյալ պատճառաբանություններով դատական նիստերի հետաձգմամբ խախտվել է ողջամիտ ժամկետում գործի քննության իր արդար դատաքննության իրավունքը, որի արդյունքում կրել է հոգեկան տառապանք:

Տվյալ դեպքում հայցվորը, վկայակոչելով դեռևս ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործի քննության ժամանակահատվածը և դատական նիստերը հետաձգելու հանգամանքը, եկել է այն եզրահանգման, որ խախտվել է իր արդար դատաքննության իրավունքը, մինչդեռ միայն գործի քննության ժամկետների մատնանշումը դեռևս բավարար չէ տվյալ իրավունքի խախտման փաստը հաստատելու համար:

Գործը ողջամիտ ժամկետում քննելու արդար դատաքննության իրավունքի խախտման փաստի վերաբերյալ հայցվորի դատողությունները հնարավոր կլիներ համարել հիմնավոր այն դեպքում, երբ ներկայացվեին ապացույցներ, որ դատական նիստերը հետաձգելը և ուշ նշանակելը թելադրված չեն եղել օբյեկտիվ պատճառներով:

Հայցվորի կողմից չի ներկայացվել ապացույց այն մասին, որ դատական նիստերի հետաձգումը կոնկրետ ժամկետով հնարավոր էր իրականացնել առավել կարճ տևողությամբ, կամ նիստերի հետաձգումը պայմանավորված չի եղել դատավարության մասնակիցների դրսևորած վարքագծով և դատավարության ընթացքով, կողմերի դրսևորած վարքագծով պայմանավորված՝ որոշակի դատավարական գործողությունների իրականացումը դատարանի կողմից չապահովելու պայմաններում, կամ կողմերի կողմից ներկայացված միջնորդությունները քննարկելու, կողմերի դիրքորոշումը լսելու և որոշումները կայացնելու անհրաժեշտությունը բացակայել է, սակայն դատարանն անհարկի հետաձգել է նիստերը, կամ դատական նիստերը հետաձգվել են կողմերի միջնորդությունների վերաբերյալ սահմանված դատավարական ժամկետներում որոշումները հրապարակելու անհրաժեշտությամբ չպայմանավորված, կողմերի դրսևորած վարքագծով պայմանավորված՝ դատավարության մյուս մասնակցին իրավունքների իրականացման ժամկետները չապահովելու պայմաններում կամ նիստը նախագահող դատավորի կողմից ոչ օբյեկտիվ պատճառներով բացակայության հետևանքով, որի արդյունքում խախտվել են իր իրավունքները:

Բացի այդ, չի հիմնավորվել հայցվորի այն պնդումը, որ սույն գործով հայցադիմումը ներկայացնելու համար հիմք հանդիսացած թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով՝ գործողության կամ անգործության արդյունքում խախտվել է իր արդար դատաքննության իրավունքը, որի արդյունքում կրել է հոգեկան տառապանք, հետևաբար՝ վերաքննիչ բողոքը ենթակա էր մերժման:

Սույն քաղաքացիական գործում առկա չեն ինչպես թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացական գործով հայցվորի ողջամիտ ժամկետում գործի քննության արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների խախտման փաստը հաստատող վերաբերելի ապացույցներ, այնպես էլ՝ հայցվորի կողմից հոգեկան կամ ֆիզիկական տառապանք կրելու հանգամանքը հաստատող ապացույցներ, ինչն էլ բացառում է ինչպես վնասի, այնպես էլ՝ վնաս պատճառելու գործողության և հետևանքների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, որպիսի պայմաններում ներկայացված վերաքննիչ բողոքը ենթակա էր մերժման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.03.2023 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ մերժել կամ բեկանել որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

<u>2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները</u>

Նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման, հետևաբար՝ արդարադատության բուն էությունը խաթարված լինելու վերաբերյալ որևէ հիմնավորում

վճռաբեկ բողոքում նշված չէ: Բողոքաբերն ընդամենը թվարկել է նյութական և դատավարական որոշակի նորմեր, գտել, որ Վերաքննիչ դատարանը խախտել է դրանք, այնուհետև առանց որևէ հիմնավորման նշել, որ խաթարվել է արդարադատության բուն էությունը: Նման պայմաններում բացակայում է բողոքը վարույթ ընդունելու հիմքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) դատական իշխանության պաշտոնական կայքում (www.court.am) թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով առկա տեղեկատվության համաձայն՝ Էլիզա Հովսեփի Լոեբերի հայցն ընդդեմ Ալեքսիս Լոեբերի, երրորդ անձ Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի մասին, վարույթ է ընդունվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2018 թվականի որոշմամբ.

2) քաղաքացիական գործով 21.03.2019 թվականին նշանակվել է նախնական դատական նիստ **(հիմք՝ www.court.am)**.

3) քաղաքացիական գործով 21.03.2019 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ դատարանը որոշել է որպես իրավասու մարմին ներգրավել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնին **(հատոր 1-ին, գ.թ. 74)**.

4) նույն քաղաքացիական գործով 10.06.2019 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ հայցվորի (հակընդդեմ հայցով պատասխանողի) միջնորդությունը՝ դատական նիստը հետաձգելու վերաբերյալ, բավարարվել է ու որոշվել է դատական նիստը հետաձգել **(հատոր 1-ին, գ.թ. 75)**.

5) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 19.08.2019 թվականի որոշմամբ Ալեքսիս Լոեբերի հակընդդեմ հայցադիմումն ընդդեմ Էլիզա Հովսեփի Լոեբերի՝ երեխաների բնակության վայրը հոր բնակության վայրում սահմանելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ **(հիմք՝ www.court.am)**.

6) դատական իշխանության պաշտոնական կայքում (www.court.am) առկա տեղեկատվության համաձայն՝ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով 04.10.2019 թվականին հրավիրված նախնական դատական նիստը չի կայացել և հետաձգվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նշված հիմքով, այն է՝ առկա են դատավորի առողջական վիճակի հետ կապված կամ այլ հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում դատարանի կողմից գործի քննությունը.

7) նույն քաղաքացիական գործով 30.03.2020 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելու պայմաններում դատավարության մասնակիցները չեն ներկայացել դատական նիստին **(հատոր 1-ին, գ.թ. 77)**.

8) նույն քաղաքացիական գործով 22.06.2020 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ հրավիրված նախնական դատական նիստը հետաձգվել է՝

հայցվորին (հակընդդեմ հայցով պատասխանողին) հնարավորություն տալով ներկայանալ հաջորդ դատական նիստին **(հատոր 1-ին, գ.թ. 78)**.

9) դատական իշխանության պաշտոնական կայքում (www.court.am) առկա տեղեկատվության համաձայն՝ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով 19.08.2020 թվականին հրավիրված նախնական դատական նիստը չի կայացել՝ թիվ ԵԴ/24349/02/20 քաղաքացիական գործով «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում արտագնա դատական նիստ անցկացնելու հանգամանքով պայմանավորված.

10) նույն քաղաքացիական գործով 19.10.2020 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ հրավիրված նախնական դատական նիստը հետաձգվել է՝ հայցվորին (հակընդդեմ հայցով պատասխանողին) հնարավորություն տալով ներկայանալ հաջորդ դատական նիստին **(հատոր 1-ին, գ.թ. 74)**.

11) դատական իշխանության պաշտոնական կայքում (www.court.am) առկա տեղեկատվության համաձայն՝ 18.11.2020 թվականին հրավիրված նախնական դատական նիստը չի կայացել և հետաձգվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նշված հիմքով, այն է՝ առկա են դատավորի առողջական վիճակի հետ կապված կամ այլ հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում դատարանի կողմից գործի քննությունը.

12) նույն քաղաքացիական գործով 12.01.2021 թվականի դատական նիստի արձանագրության և դատական նիստի արձանագրման ձայնային կրիչի համաձայն՝ Դատարանը որոշել է հետաձգել հրավիրված նախնական դատական նիստը՝ հնարավորություն տալով իրավասու մարմին Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնին իրականացնել հետազոտություն **(հատոր 1-ին, գ.թ. 87, 88)**.

13) նույն քաղաքացիական գործով 24.02.2021 թվականի դատական նիստի արձանագրության և դատական նիստի արձանագրման ձայնային կրիչի համաձայն՝ հրավիրված նախնական դատական նիստը հետաձգվել է՝ հնարավորություն տալով հայցվոր (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերի ներկայացուցիչ Ալինա Ավետիսյանին ծանոթանալու քաղաքացիական գործի նյութերին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վերջինս իր լիազորություններն ստանձնել է 24.02.2021 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 89-90)**.

14) նույն քաղաքացիական գործով 14.04.2021 թվականի դատական նիստի արձանագրության և դատական նիստի արձանագրման ձայնային կրիչի համաձայն՝ դատական նիստը հետաձգվել է հայցվոր (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ապահովելու և կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքի ապահովման նկատառումներից ելնելով, քանի որ հայցվոր (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերը, ներկայանալով 14.04.2021 թվականին հրավիրված նախնական դատական նիստին, հայտնել է, որ հրաժարվել է իր բոլոր չորս ներկայացուցիչների կողմից մատուցվող ծառայություններից այն հիմնավորմամբ, որ սույն քաղաքացիական գործն ունի միջազգային բնույթ և ինքը ցանկանում է օգտվել միջազգային իրավունքին տիրապետող փաստաբանի ծառայություններից: Ընդ որում՝

դատական նիստի արձանագրության հետազոտմամբ Դատարանը պարզել է, որ նախագահող դատավորը հորդորել է հայցվոր (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերին բացառել նմանօրինակ իրավիճակները՝ շեշտադրելով, որ նախորդ դատական նիստը հետաձգվել էր նույն հիմքով **(հատոր 1-ին, գ.թ. 91, 92)**.

15) դատական իշխանության պաշտոնական կայքում (www.court.am) առկա տեղեկատվության համաձայն՝ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործի քննությունը դեռևս չի ավարտվել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 1087.2-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ ու 8-րդ կետերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատարաններում գործերի քննության ողջամիտ ժամկետի խախտման և դրա հետևանքով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված արդար դատաքննության իրավունքի ու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման առանձնահատկություններին՝ վերահաստատելով նաև նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ նույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները:

Կոնվենցիայի (փոփոխված 11-րդ արձանագրությամբ) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին» թիվ 6 (2004) կարծիքի (այսուհետ՝ ԵԴԽԽ Կարծիք) 3-րդ կետի համաձայն՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով, մասնավորապես, ներմուծվել են դատավարական իրավունքի լայնածավալ կանոններ, որոնք ընդհանուր են տարբեր եվրոպական երկրների համար, և սահմանվել են ընդհանուր սկզբունքներ, որոնք, անկախ ազգային համակարգերի տարբեր տնտեսական կարողություններից և բազմազանությունից, նպատակաուղղված են ապահովելու դատարանների մատչելիության իրավունքը, արդար և անաչառ դատաքննության արդյունքում ողջամիտ ժամկետում որոշում ստանալու իրավունքը և ընդունված ցանկացած որոշման կատարումն ապահովելու իրավունքը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա/ ցանկացած այն անձի համար, որի նույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ/ ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ/ ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը, դրանք տրամադրելու դեպքում:

Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային վերը հիշատակված պայմանագրերի մեջբերված իրավադրույթների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ Սահմանադրության ու թե՛ իրավունքի նորմեր պարունակող վերը հիշատակված միջազգային պայմանագրերի համապատասխան կարգավորումներով Հայաստանի Հանրապետությունում ամրագրված և երաշխավորված են անձի արդար դատաքննության ու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, որոնք հարգելը և կենսագործելը պետության ուղղակի պարտականությունն են, ինչը պետք է իրականացվի համապատասխան իրավական ու գործնական հնարավորությունների և երաշխիքների սահմանման ու դրանց կատարման ապահովման միջոցով:

Դրան համապատասխան, Սահմանադրությամբ, փաստորեն, սահմանվել են մարդու հիմնական իրավունքները, որոնց թվում ներառվել են նաև անձի արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Սահմանադրությամբ ամրագրված է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, լինելով արդար դատաքննության իրավունքի տարր, ևս ենթակա է դատական պաշտպանության (Սահմանադրության հոդված 63):

Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային պայմանագրերի ուժով հանդիսանում են անձի հիմնարար իրավունքներ, ուստի դրանց կենսագործման հնարավորությունը պետք է լինի ապահովված:

Սահմանադրական դատարանը 08.12.2020 թվականին կայացրած թիվ ՍԴՈ-1571 որոշմամբ նշել է, որ պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքներն ու ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքները և ազատությունները: Սահմանադրական դատարանը գտել է, որ պետությունն առաջին հերթին պետք է սահմանի անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ իրացումը՝ կանխելով արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումները, մյուս կողմից՝ գործի քննության ձգձգումների դեպքում

պետք է ապահովի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորություն:

Սահմանադրական դատարանը 05.02.2013 թվականի թիվ ՍԴՈ-1074 գործի որոշմամբ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կապակցությամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի քննությունը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամակայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:

Սահմանադրական դատարանն իր 16.03.2021 թվականին կայացրած թիվ ՍԴՈ-1585 որոշմամբ արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն արդար դատաքննության իրավունքի անկյունաքարերից մեկն է, և դրա խախտումը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, ուղղակիորեն վտանգել արդարադատության իրականացման ողջ գործընթացի արդյունավետությունն ու կասկածի տակ դնել այդ գործընթացի վստահելիությունը: Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, որի համաձայն՝ «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության» *(տե՛ս Vazagashvili-ն և Shanava-ն ընդդեմ Վրաստանի թիվ 50375/07 գանգատով Եվրոպական դատարանի 18.07.2019 թվականի որոշումը, կետ 89, Lopatin-ն ու Medvedskiy-ն ընդդեմ Ուկրաինայի թիվ 2278/03 և 6222/03 գանգատներով Եվրոպական դատարանի 20.05.2010 թվականի որոշումը, կետ 75)*, քանի որ գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1087.2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման եղանակը, հիմքը և չափը որոշվում են նույն հոդվածին և նույն օրենսգրքի 162.1 հոդվածին համապատասխան:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Եթե նույն օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված հիմնարար իրավունքը խախտվել է տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, ապա ոչ նյութական վնասը հատուցվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

Նույն հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ նույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,

2) նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ նույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում:

Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսած առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

Մինչև 09.06.2022 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես նույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ՝ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

Նույն հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով: Հետադարձ պահանջ ներկայացնելու հիմք է հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

Օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 8-րդ ենթակետերի համաձայն՝ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության

հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները (....), արդար դատաքննության իրավունքը (....), իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում անձն իրավունք ունի իր հիմնարար իրավունքի խախտման փաստը հաստատելու և ոչ նյութական վնասի հատուցման պահանջներով դիմելու դատարան՝ հիմնավորելով, որ տեղական ինքնակառավարման կամ պետական մարմնի կամ նրա պաշտոնատար անձի գործողության կամ անգործության հետևանքով խախտվել է իր՝ Օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված հիմնարար իրավունքներից առնվազն մեկը, որի դեպքում վերջինս իրավասու է ներկայացնել նաև ոչ նյութական վնասի հատուցման պահանջ՝ հաշվի առելով Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված սահմանափակումները:

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել նաև, որ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից: Ընդ որում՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես Օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ կետով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ՝ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի (այդ թվում՝ ըստ փուլերի) քննության միջին ուղենիշային տևողությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե գործի քննության և լուծման համար օրենքով սահմանված է հատուկ ժամկետ, ապա այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում: Նման ժամկետի երկարաձգումը թույլատրվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Բարձրագույն դատական խորհուրդն իր 20.12.2021 թվականի թիվ ԲԴԽ-101-Ո-Կ-27 որոշմամբ արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը ներառում է նախևառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից ենթադրում է դատարանի պարտականությունը՝ ողջամիտ ժամկետում քննելու գործն ու կայացնելու օրինական և հիմնավորված որոշում, գտել է, որ յուրաքանչյուր գործով դատարանները, ելնելով գործի հանգամանքներից, դրա իրավական ու փաստական բարդությունից, գնահատելով վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, պետք է ձեռնարկեն արդյունավետ և օրինական բոլոր միջոցները՝ հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու համար:

Գործի ողջամիտ ժամկետում քննության հարցի վերաբերյալ կայացված դատական ակտերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) բազմիցս շեշտել է արդարադատության՝ առանց ձգձգումների իրականացման կարևորությունը, ինչը կարող է վտանգել դրա արդյունավետությունն ու վստահելիությունը *(տե՛ս Scordino-ն ընդդեմ Իտալիայի թիվ 36813/97 գանգատով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի որոշումը, կետ 224)*: Պետության կողմից խախտումների կուտակումը ձևավորում է Կոնվենցիայի հետ անհամատեղելի իրավական պրակտիկա *(տե՛ս Bottazzi-ն ընդդեմ Իտալիայի թիվ 34884/97 գանգատով Եվրոպական դատարանի 28.07.1999 թվականի վճիռը, կետ 22)*: Ինչ վերաբերում է համապատասխան ժամկետի սկզբին, ապա այն սովորաբար սկսվում է այն պահից, երբ հայց է հարուցվում իրավասու դատարան *(տե՛ս Poiss-ն ընդդեմ Ավստրիայի թիվ 9816/82 գանգատով Եվրոպական դատարանի 23.04.1987 թվականի վճիռը, կետ 50, Bock-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 22051/07 գանգատով Եվրոպական դատարանի 19.01.2010 թվականի որոշումը, կետ 35)*: Ինչ վերաբերում է ժամկետն ավարտելու հարցին, ապա այն սովորաբար տարածվում է քննարկվող ամբողջ վարույթի վրա՝ ներառելով բողոքարկման վարույթը *(տե՛ս Konig-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 6232/73 գանգատով Եվրոպական դատարանի 28.06.1978 թվականի վճիռը, կետ 98, (in fine) վերջում)*՝ ճիշտ ընդհուպ մինչև վեճը լուծող որոշման ընդունումը *(տե՛ս Poiss-ն ընդդեմ Ավստրիայի թիվ 9816/82 գանգատով Եվրոպական դատարանի 23.04.1987 թվականի վճիռը, կետ 50):* Ուստի, ողջամիտ ժամկետի պահանջը կիրառվում է իրավական վարույթի բոլոր այն փուլերի նկատմամբ, որոնք ուղղված են վեճը լուծելուն՝ չբացառելով գործն ըստ էության լուծող վճռին հաջորդող փուլերը *(տե՛ս Robins-ն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22410/93 գանգատով Եվրոպական դատարանի 23.09.1997 թվականի վճիռը, կետերը 28-29):*

Անդրադառնալով դատական վարույթի քննության ժամկետի «ողջամտության» չափանիշի բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ հատկանիշը հստակ բանաձևով կամ սահմանումով բնորոշել հնարավոր չէ, քանի որ այն յուրաքանչյուր դեպքում ենթակա է առանձին գնահատման՝ հաշվի առնելով տվյալ դեպքի բոլոր էական փաստական հանգամանքները: Այդուհանդերձ, հնարավոր է առանձնացնել որոշակի չափորոշիչներ, որոնք ինչ-որ չափով կարող են պիտանի լինել գործի քննության ժամկետի «ողջամիտ» լինելու հարցը գնահատելու համար:

Մասնավորապես, ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում վարույթի տևողության ողջամտությունը յուրաքանչյուր դեպքի համար պետք է գնահատվի ըստ հատուկ հանգամանքների *(տե՛ս Frydlender-ն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 30979/96 գանգատով Եվրոպական դատարանի 27.06.2000 թվականի վճիռը, կետ 43)*, որը կարող է պահանջել ընդհանուր գնահատում *(տե՛ս Obermeier-ն ընդդեմ Ավստրիայի թիվ 11761/85 գանգատով Եվրոպական դատարանի 28.06.1990 թվականի որոշումը, կետ 72, Comingersoll S.A.-ն ընդդեմ Պորտուգալիայի թիվ 35382/97 գանգատով Եվրոպական դատարանի 06.04.2000 թվականի վճիռը, կետ 23):* Վարույթի տևողության ողջամտությունը պետք է գնահատվի դատարանի նախադեպային իրավունքով հաստատված հետևյալ չափանիշների լույսի ներքո.

1. գործի բարդությունը,
2. դիմումատուի և համապատասխան մարմինների դրսևորած վարքագիծը,
3. այն, ինչը դիմումատուի համար խաղաքարտին է դրված վեճի շրջանակներում *(տե՛ս Comingersoll S.A.-ն ընդդեմ Պորտուգալիայի թիվ 35382/97 գանգատով Եվրոպական դատարանի 06.04.2000 թվականի վճիռը, կետ 19, Frydlender-ն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 30979/96 գանգատով Եվրոպական դատարանի 27.06.2000 թվականի վճիռը, կետ 43, Srmeli-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 75529/01 գանգատով Եվրոպական դատարանի 08.06.2006 թվականի վճիռը, կետ 128, Fil LLC-ն ընդդեմ Հայաստանի թիվ 18526/13 գործով Եվրոպական դատարանի 31.01.2019 թվականի որոշումը, կետ 63):*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ և բացահայտել յուրաքանչյուր չափանիշների էությունը:

Գործի բարդությունը.

Գործի բարդությունը կարող է կապված լինել և՛ փաստերի հիմքով, և՛ օրենքի հիմքով բարձրացվող հարցերի հետ *(տե՛ս Katte Klitsche de la Grange-ն ընդդեմ Իտալիայի թիվ 12539/86 գանգատով Եվրոպական դատարանի 19.09.1994 թվականի վճիռը, կետ 55, Papachelas-ն ընդդեմ Հունաստանի թիվ 31423/96 գանգատով Եվրոպական դատարանի 25.03.1999 թվականի վճիռը, կետ 39)*: Այն, օրինակ, կարող է կապված լինել գործում մի քանի կողմ ներգրավելու հետ *(տե՛ս H.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 9580/81 գանգատով Եվրոպական դատարանի 08.07.1987 թվականի վճիռը, կետ 72)* կամ ձեռք բերվելիք տարբեր ապացույցների հետ *(տե՛ս Humen-ն ընդդեմ Լեհաստանի թիվ 26614/95 գործով Եվրոպական դատարանի 03.12.1997 թվականի որոշումը, կետ 63),* փորձաքննություններ նշանակելու և դրանց կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ *(տե՛ս Fil LLC-ն ընդդեմ Հայաստանի թիվ 18526/13 գործով Եվրոպական դատարանի 31.01.2019 թվականի որոշումը, կետ 63):* Միաժամանակ, գործի բարդությունը որոշելիս պետք է նաև հաշվի առնել դատաքննության ընթացքում լուծվող իրավական խնդիրների բնույթը (ինչպիսիք կարող են լինել, օրինակ՝ գործի ընդդատությունը, կիրառման ենթակա իրավական ակտի սահմանադրականությունը, միջազգային պայմանագրի մեկնաբանությունը և այլն): Նշվածի համատեքստում առանցքային

նշանակություն ունի նաև գործի քննության ընդհանուր ժամկետի գնահատումը՝ այնպիսի հանգամանքների հաշվառմամբ, ինչպիսիք են՝ այդ ժամկետում դատական ակտերի բողոքարկման կառուցակարգի գործադրման ընդհանուր ժամանակահատվածը, տևական ժամկետ պահանջող դատավարական գործողությունների կատարմամբ առաջացած ժամկետային խզումները, բեկանված և նոր քննության ուղարկված գործերով՝ քննության ծավալի ու ժամանակահատվածի հարաբերակցությունը գործի ընդհանուր քննության ծավալի և ժամկետի հետ:

Դիմումատուի և համապատասխան մարմինների վարքագիծը.

Դիմումատուներից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ո՛չ պահանջվում է ակտիվորեն համագործակցել դատական մարմինների հետ, ո՛չ էլ նրանց կարելի է մեղադրել ներպետական օրենսդրությամբ նրանց համար հասանելի իրավական պաշտպանության միջոցներից լիովին օգտվելու մեջ *(տե՛ս Erkner-ը և Hofauer-ն ընդդեմ Ավստրիայի թիվ 9616/81 գանգատով Եվրոպական դատարանի 23.04.1987 թվականի վճիռը, կետ 68)*: Տվյալ անձից պահանջվում է միայն ողջամտություն ցուցաբերել իրեն առնչվող դատավարական քայլերի կատարման հարցում, ձեռնպահ մնալ ձգձգելու հնարքների գործադրումից և օգտվել ներպետական օրենսդրությամբ տրամադրվող շրջանակներից՝ վարույթը կրճատելու համար *(տե՛ս Union Alimentaria Sanders S.A.-ն ընդդեմ Իսպանիայի թիվ 11681/85 գանգատով Եվրոպական դատարանի 07.07.1989 թվականի վճիռը, կետ 35)*: Դիմումատուի վարքագիծը համարվում է օբյեկտիվ փաստ, որը չի կարող վերագրվել պատասխանող պետությանը, և որը պետք է հաշվի առնել՝ որոշելու համար, թե արդյո՞ք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ողջամիտ ժամկետը գերազանցվել է, թե՝ ոչ *(տե՛ս Poiss-ն ընդդեմ Ավստրիայի թիվ 9816/82 գանգատով Եվրոպական դատարանի 23.04.1987 թվականի վճիռը, կետ 57, Wiesinger-ն ընդդեմ Ավստրիայի թիվ 11796/85 գանգատով Եվրոպական դատարանի 30.10.1991 թվականի վճիռը, կետ 57, Humen-ն ընդդեմ Լեհաստանի թիվ 26614/95 գործով Եվրոպական դատարանի 03.12.1997 թվականի որոշումը, կետ 66)*: Մեկ այլ դեպքում, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատուի վարքագիծն ինքնին չի կարող օգտագործվել որպես միջոց՝ անգործության ժամանակահատվածն արդարացնելու համար:

Մասնավորապես, անհրաժեշտ է գնահատման ենթարկել, թե դատավարության տևողությունը ձգձգող պատճառներն ընդհանուր առմամբ արդյո՞ք ձևավորվել են դատավարության մասնակիցների դրսևորած վարքագծի արդյունքում: Այսպես, հարկ է պարզել, թե արդյո՞ք դատական նիստերը հետաձգվել են պատշաճ ծանուցված լինելու պայմաններում նշված դատավարության մասնակիցների՝ դատական նիստերին պարբերաբար չներկայանալու պատճառներով, արդյո՞ք դրանք եղել են հարգելի, թե՝ անհարգելի, ու՞մ կողմից է ներկայացվել դատական նիստը հետաձգելու մասին միջնորդություն, արդյո՞ք դատավարության մասնակիցներն իրենց դատավարական իրավունքներից օգտվել և իրենց դատավարական պարտականությունները կատարել են բարեխղճորեն, թ՞ե իրենց վարքագծով կանխամտածված խոչընդոտներ են ստեղծել, որոնք հավանաբար կձգձգեին գործի վարույթը[3]: Վերջինի առումով առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյո՞ք անձը

չարաշահել է իր դատավարական իրավունքները (*“abuse of rights”*): Որպես օրինակ կարող են լինել այն դեպքերը, երբ անձի վարքագիծը հանգեցնում է դատական նիստերի պարբերաբար հետաձգման (այդ նպատակով անձը ներկայացնում է միջնորդություն՝ դատական նիստը հետաձգելու և գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ, ընդ որում՝ որոշ դեպքերում՝ ամբողջությամբ գործի նյութերին արդեն իսկ մեկ անգամ ծանոթացած լինելու պայմաններում, ներկայացնում է բացարկի և ինքնաբացարկի միջնորդություններ, հանդես գալիս հայտարարություններով, փոխում կամ հրաժարվում պաշտպանից, խախտում դատական նիստի կարգը, անհարգալից վերաբերմունք դրսևորում դատարանի նկատմամբ): Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ իրավական պաշտպանության միջոցներից բարեխղճորեն, իր նպատակային նշանակությանը համապատասխան օգտվելը չի կարող գնահատվել որպես շահագրգիռ սուբյեկտների կողմից գործի քննությունը դանդաղեցնող վարքագծի դրսևորում:

Չնայած նրան, որ ներպետական մարմինները չեն կարող պատասխանատվություն կրել ամբաստանյալի վարքագծի համար՝ այնուամենայնիվ, կողմերից որևէ մեկի կողմից ձգձգելու հնարքների գործադրումը համապատասխան մարմիններին չի ազատում վարույթի՝ ողջամիտ ժամկետում իրականացումն ապահովելու պարտականությունից *(տե՛ս Mincheva-ն ընդդեմ Բուլղարիայի թիվ 21558/03 գանգատով Եվրոպական դատարանի 02.09.2010 թվականի վճիռը, կետ 68):*

Եվրոպական դատարանը հավելել է, որ միայն պետությանը վերագրելի ձգձգումները կարող են արդարացնել «ողջամիտ ժամկետի» պահանջը չբավարարելու մասին եզրահանգումը *(տե՛ս Buchholz-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 7759/77 գանգատով Եվրոպական դատարանի 06.05.1991 թվականի վճիռը, կետ 49, Papageorgiou-ն ընդդեմ Հունաստանի թիվ 24628/94 գանգատով Եվրոպական դատարանի 22.10.1997 թվականի վճիռը, կետ 40, Humen-ն ընդդեմ Լեհաստանի թիվ 26614/95 գործով Եվրոպական դատարանի 15.10.1999 թվականի որոշումը, կետ 66):*

Պետությունը պատասխանատու է իր բոլոր մարմինների համար՝ ոչ միայն դատական մարմինների, այլև բոլոր հասարակական հաստատությունների համար *(տե՛ս Martins Moreira-ն ընդդեմ Պորտուգալիայի թիվ 11371/85 գանգատով Եվրոպական դատարանի 26.10.1988 թվականի վճիռը, կետ 60)*: Նույնիսկ այնպիսի իրավական համակարգերում, որոնցում կիրառվում է այն սկզբունքը, որ ընթացակարգի իրականացման նախաձեռնությունը վերապահվում է կողմերին, վերջիններիս վերաբերմունքը դատարաններին չի ազատում արագ կերպով դատաքննություն ապահովելու պարտավորությունից, ինչը պահանջվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով *(տե՛ս Pafitis-ը և այլք ընդդեմ Հունաստանի թիվ 20323/92 գանգատով Եվրոպական դատարանի 26.02.1998 թվականի վճիռը, կետ 93, Tierce-ն ընդդեմ Սան Մարինոյի թիվ 69700/01 գանգատով Եվրոպական դատարանի 17.06.2003 թվականի որոշումը, կետ 31, Surmeli-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 75529/01 գանգատով Եվրոպական դատարանի 08.06.2006 թվականի վճիռը, կետ 129):*

Եվրոպական դատարանի բնորոշմամբ՝ պայմանավորվող պետություններն իրենք են կազմակերպում իրենց իրավական համակարգն այնպես, որ իրենց դատարանները կարողանան երաշխավորել, որ յուրաքանչյուր ոք ողջամիտ ժամկետում ձեռք բերի

քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ վեճերի մասին վերջնական որոշում: Դատարանի ծանրաբեռնվածությունը չի կարող արդարացնել վարույթի չափազանց երկար *տևողությունը (տե՛ս Probstmeier-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 20950/92 գանգատով Եվրոպական դատարանի 01.07.1997 թվականի վճիռը, կետ 64)*, քանի որ անդամ պետություններն իրենց իրավական համակարգը պետք է կազմակերպեն այնպես, որ երաշխավորվի ողջամիտ ժամկետում դատական որոշումներ ձեռք բերելու իրավունքը, չափազանց մեծ ծանրաբեռնվածությունը չի կարող հաշվի առնվել որպես արդարացում:

Ի՞նչն է խաղաքարտին դրված վեճի ընթացքում.

Զբաղվածության մասին վեճերն իրենց բնույթով պահանջում են արագ որոշման ընդունում *(տե՛ս Vocaturo-ն ընդդեմ Իտալիայի թիվ 11891/85 գանգատով Եվրոպական դատարանի 24.05.1991 թվականի որոշումը, կետ 17)*՝ անկախ այն հանգամանքից, թե խաղաքարտին դրված հարցը կապված է հումանիտար մասնագիտության մատչելիության *(տե՛ս Thlimmenos-ն ընդդեմ Հունաստանի թիվ 34369/97 գանգատով Եվրոպական դատարանի 06.04.2000 թվականի որոշումը, կետեր 60 և 62)*, դիմումատուի ամբողջ մասնագիտական գործունեության *(տե՛ս Konig-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 6232/73 գանգատով Եվրոպական դատարանի 10.03.1980 թվականի որոշումը, կետ 111)*, դիմումատուի զբաղվածության շարունակական լինելու *(տե՛ս Garcia-ն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 41001/98 գանգատով Եվրոպական դատարանի 26.09.2000 թվականի որոշումը, կետ 14)*, մերժման դեմ բողոքի *(տե՛ս Buchholz-ն ընդդեմ Գերմանիայի թիվ 7759/77 գանգատով Եվրոպական դատարանի 06.05.1981 թվականի որոշումը, կետ 52)*, աշխատանքային գործունեության կասեցման *(տե՛ս Obermeier-ն ընդդեմ Ավստրիայի թիվ 11761/85 գանգատով Եվրոպական դատարանի 28.06.1990 թվականի որոշումը, կետ 72)*, նրա տեղափոխման *(տե՛ս Sartory-ն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 40589/07 գանգատով Եվրոպական դատարանի 24.09.2009 թվականի որոշումը, կետ 34)* կամ նրա վերականգնման հետ, թե ոչ *(տե՛ս Doustaly-ն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 26256/95 գանգատով Եվրոպական դատարանի 23.04.1998 թվականի որոշումը, կետ 117)*, կամ երբ պահանջվող գումարը դիմումատուի համար ունի էական նշանակություն:

Եվրոպական դատարանը նշում է, որ այս երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունը և վերջինիս նկատմամբ վստահությունը: «Ողջամիտ ժամկետ» եզրույթի էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում՝ դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից կամ նրան առաջադրված քրեական մեղադրանքից:

Վճռաբեկ դատարանը վկայակոչված իրավանորմերի և դիրքորոշումների համատեքստում արձանագրում է, որ գործի ողջամիտ ժամկետում քննությունը հանդիսանում է արդար դատաքննության ու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների անքակտելի բաղադրիչը, և կոնկրետ դեպքերում գործի քննության ժամկետի «ողջամտությունը» պետք է գնահատվի ըստ վերը հիշատակված չափորոշիչների:

Հիմնարար իրավունքների բովանդակության բացահայտման մասով վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես արդար դատաքննության, այնպես էլ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների անքակտելի մասն է կազմում իրավունքը խախտված անձի հայցով հարուցված դատական վարույթի լուծումը ողջամիտ ժամկետում, քանի որ ուշացած արդարադատությունը, ինչպես բազմիցս նշել է Եվրոպական դատարանը, երբեմն, հավասարազոր է մերժված արդարադատությանը: Նշանակում է՝ արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները ներառում են անձի հայցի հիման վրա հարուցված դատական վարույթի քննությունն ու լուծումը բացառապես ողջամիտ ժամկետում, քանի որ գործի քննության ժամկետի երկարացումները կարող են հանգեցնել ինչպես նյութական և ոչ նյութական վնասների, այնպես էլ՝ անձի մոտ տվյալ գործի նկատմամբ իրավական «հետաքրքրվածության» կորստի, ինչն իր հերթին կխաթարի դատական պաշտպանության իրավունքի բուն էությունն այն առումով, որ այդ իրավունքի իրականացումը տրամաբանորեն պետք է հանգեցնի անձի խախտված իրավունքների **իրական** վերականգնմանը:

Անդրադառնալով հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման չափին վերաբերող իրավակարգավորումներին՝ Սահմանադրական դատարանը 03.03.2020 թվականի ՍԴՈ-1513 որոշմամբ արձանագրել է հետևյալը.

նախ՝ ի տարբերություն նյութական վնասի՝ ոչ նյութական վնասի չափը անհնար է ճշգրիտ որոշել: Քանի որ ոչ նյութական վնասն անձի ֆիզիկական կամ հոգեկան տառապանքն է, ապա առաջին հերթին անձն ինքը պետք է հնարավորություն ունենա գնահատել այդ տառապանքի դիմաց հատուցման դրամական չափը,

երկրորդ՝ ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի կամ համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին, ինչը ենթադրում է, որ հատուցման չափը որոշելիս հաշվի են առնվում նաև պետության կամ համայնքի ֆինանսական հնարավորությունները,

երրորդ՝ ոչ նյութական վնասի՝ դրամական հատուցման վերջնական չափը որոշում է դատարանը՝ հիմք ընդունելով ողջամտության, արդարացիության և համաչափության սկզբունքները, ինչպես նաև հաշվի առնելով ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառված վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները և այլ վերաբերելի հանգամանքներ,

չորրորդ՝ ոչ նյութական վնասի դրամական հատուցման համար նախատեսված է առավելագույն սահման, որով կաշկանդված են հատուցում պահանջող անձը և դատարանը (որոշակի վերապահումով կամ բացառությամբ) (տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 03.03.2020 թվականի ՍԴՈ-1513 որոշում, կետ 4.4):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ոչ նյութական վնասի հատուցման համար անհրաժեշտ պայմաններն են, մասնավորապես՝

-արդյո՞ք առկա է ոչ նյութական վնասի հատուցման համար հիմք հանդիսացող խախտված իրավունք,

-արդյո՞ք այն խախտած անձը ներառված է օրենսդրի կողմից սահմանված անձանց շրջանակի մեջ,

-հոգեկան կամ ֆիզիկական տառապանքի առկայություն,

-ոչ նյութական վնասի չափի հիմնավորվածություն (…):

Ոչ նյութական վնասի հատուցման հիմք հանդիսացող տառապանքի, մասնավորապես՝ հոգեկան տառապանքի հաստատման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման տառապանքը հաստատելու համար ուղղակի ապացույցներ (օրինակ՝ բժշկական փաստաթղթեր, փորձագետի եզրակացություն) կարող են և չներկայացվել: Տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցմունքներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու համար չափից ավելի ֆորմալ պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից: (…): Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության և համաչափության (equitableness) սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ *(տե՛ս Մամիկոն Ստեփանյանն ընդդեմ Ֆինանսների նախարարության թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործով 27.12.2017 թվականի ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը):*

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ իրավունքի գերակայությունն ապահովելու տեսանկյունից, արդարադատություն իրականացնելիս դատարանն իրավասու է հոգեկան տառապանքի փաստը, կախված խախտված իրավունքի բնույթից, հաստատված համարել՝ հիմք ընդունելով նաև սահմանադրական կարգի հիմունքները, ինչպես նաև անձի մյուս հիմնարար իրավունքները կամ արժեքները պաշտպանելու անհրաժեշտությունը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործով դիմելով դատարան՝ Ալեքսիս Լոեբերը խնդրել է ճանաչել թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով պատասխանող (հակընդդեմ հայցով հայցվոր) Ալեքսիս Լոեբերի արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը և Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես հիմնարար իրավունքների խախտմամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

Դատարանը Ալեքսիս Լոեբերի հայցը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «*(…)Դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից այլ բան ապացուցված չլինելու պայմաններում դատական նիստերի հետաձգումը և հաջորդ դատական նիստը նշանակելու միջև ընկած ժամանակահատվածն եղել է օբյեկտիվ անհրաժեշտությամբ՝ պայմանավորված գործի*

հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու հանգամանքով, նամանավանդ, եթե նկատի ունենանք, որ հայցի առարկա երեխաների բնակության վայր սահմանելու պահանջի մասին է, հետևաբար դատարանի խնդիրն է բացահայտել երեխայի լավագույն շահերը՝ հաստատելով ողջամիտ հավասարակշռություն ծնողի իրավունքների և երեխայի լավագույն շահերի միջև: Անդրադառնալով հայցվորի ներկայացուցչի դիրքորոշմանն առ այն, որ «ուշացած արդարադատությունը մերժված արդարադատություն է»՝ Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ միայն գործի քննության ժամկետի մատնանշումը դեռևս բավարար հիմք չէ արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը հաստատված համարելու համար: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից չի ապացուցվել թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով՝ գործողության կամ անգործության արդյունքում իր արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը, որի արդյունքում վերջինս կրել է հոգեկան տառապանք»:

Վերաքննիչ դատարանը, 31.03.2023 թվականի որոշմամբ մասնակիորեն բավարարելով Ալեքսիս Լոեբերի վերաքննիչ բողոքը, Դատարանի 12.07.2022 թվականի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է հետևյալ պատճառաբանությամբ. *«Թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործի քննության տևողությունը հայցի հարուցման պահից՝ 25.12.2018թ. և մինչև սույն՝ ԵԴ/18511/02/21 քաղաքացիական գործի հարուցումը՝ 29.04.2021թ., խախտել են Ալեքսիս Լոեբերի արդար դատաքննության իրավունքը՝ ողջամիտ ժամկետում գործը քննելու հատկանիշներով, այլ կերպ ասած, թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով տեղի է ունեցել արդարադատության իրականացման ձգձգումներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են մարդու իրավունքի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի խախտման: (...) Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով թե՛ հայցը, թե՛ հակընդդեմ հայցը վերաբերում են երեխաների՝ Էրիկ Անդրե Լոեբերի (ծնված՝ 05.03.2007թ.) և Լուկաս Դավիդ Լոեբերի (ծնված՝ 28.10.2008թ.) բնակության վայրը որոշելուն, որոնք հայցի հարուցման պահին՝ 25.12.2018թ. եղել են համապատասխանաբար 11 և 10 տարեկան, իսկ սույն քաղաքացիական գործի հարուցման պահի՝ 29.04.2021թ. դրությամբ վերջիններս արդեն 14 և 12 տարեկան են եղել և հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դատական իշխանության պաշտոնական կայքում (www.datalex.am) վերաքննիչ բողոքի քննության պահին առկա տեղեկատվության համաձայն՝ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով դեռևս չի հրապարակվել գործը ըստ էության լուծող դատական ակտ՝ երեխաների համապատասխանաբար 16 և 14 տարեկան դառնալու պայմաններում, Վերաքննիչ դատարանը գալիս է այն համոզման, որ դատական նիստերի նման անհիմն ձգձգումների դեպում հնարավոր է, որ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով կայացվելիք գործը ըստ էության լուծող դատական ակտը կարող է դառնալ «ժամանակավրեպ»՝ երեխաների չափահաս դառնալու/չափահաս դառնալու մոտ տարիքի հիմքով, ինչը որևէ կերպ չի բխում երեխաների լավագույն շահերից: Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով*

Բողոքաբերի արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ փաստարկները հիմնավորված են»:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոքի մյուս հիմքին՝ վնասի հատուցման չափին, արձանագրել է, որ *«Թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործը, հարուցված լինելով 25.12.2018թ., մինչև սույն քաղաքացիական գործի հարուցումը՝ 29.04.2021թ. տևելով շուրջ 2 տարի 4 ամիս, հայցվորին պահել է լարված վիճակում՝ երեխաների բնակության վայրը որոշելու հեռանկարով: Ավելին, նշված գործով երեխաների բնակության վայրը իր բնակության վայրով սահմանվելու վերաբերյալ գործը ըստ էության լուծող դատական ակտ ստանալու օրինական սպասելիքով պայմանավորված՝ Բողոքաբերն անընդմեջ սպասել և շարունակում է սպասել իր գործի ելքին, գործի երկարատև քննության արդյունքում հայցվորի մոտ առկա է երեխաների բնակության վայրի որոշման հետ կապված հարցով անորոշություն, ինչն էլ իր հերթին առաջացրել է հոգեկան տառապանք: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում որպես հայցվորի արդար դատաքննության և արդյունավետ պաշտպանության հիմնարար իրավունքի խախտմամբ առաջացած վնասի հատուցում պետք է սահմանել 500,000ՀՀ դրամ գումարի չափով»:*

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով ներկայացված՝ երեխաների բնակության վայրը սահմանելու մասին պահանջի՝ սույն գործով հայցադիմումը ներկայացնելու պահին երեք տարի քննության ժամկետն ինչպես անկանխակալ դիտորդի տեսանկյունից, այնպես էլ դատավարության կողմերի օրինական իրավունքների իրացման տեսանկյունից իրավացիորեն չի կարող առերևույթ դիտվել որպես ողջամիտ ժամկետ:

Տվյալ դեպքում, թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով Էլիզա Հովսեփի Լոեբերի հայցն ընդդեմ Ալեքսիս Լոեբերի, երրորդ անձ Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի մասին, վարույթ է ընդունվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2018 թվականի որոշմամբ, 21.03.2019 թվականին նշանակվել է նախնական դատական նիստ: 21.03.2019 թվականի որոշմամբ դատարանը գործով որպես իրավասու մարմին ներգրավել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնին: 10.06.2019 թվականին նշանակված դատական նիստը հետաձգվել է պատասխանողի (սույն գործով հայցվորի) միջնորդության հիման վրա: Դատարանի 19.08.2019 թվականի որոշմամբ վարույթ է ընդունվել Ալեքսիս Լոեբերի հակընդդեմ հայցն ընդդեմ Էլիզա Հովսեփի Լոեբերի՝ երեխաների բնակության վայրը հոր բնակության վայրում սահմանելու պահանջի մասին: Թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով 04.10.2019 թվականին հրավիրված նախնական դատական նիստը չի կայացել և հետաձգվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նշված հիմքով, այն է՝ դատավորի առողջական վիճակի հետ կապված կամ այլ հարգելի հանգամանքներով, որոնք անհնար են

դարձնում դատարանի կողմից գործի քննությունը: 30.03.2020 թվականի նշանակված դատական նիստին պատշաճ ծանուցված լինելու պայմաններում դատավարության մասնակիցները չեն ներկայացել դատական նիստին: 22.06.2020 թվականին հրավիրված նախնական դատական նիստը հետաձգվել է՝ հայցվորին (հակընդդեմ հայցով պատասխանողին) հնարավորություն տալով ներկայանալ հաջորդ դատական նիստին: 19.08.2020 թվականին հրավիրված նախնական դատական նիստը չի կայացել՝ թիվ ԵԴ/24349/02/20 քաղաքացիական գործով «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում արտագնա դատական նիստ անցկացնելու հանգամանքով պայմանավորված: 19.10.2020 թվականին հրավիրված նախնական դատական նիստը հետաձգվել է՝ հայցվորին (հակընդդեմ հայցով պատասխանողին) հնարավորություն տալով ներկայանալ հաջորդ դատական նիստին: 18.11.2020 թվականին հրավիրված նախնական դատական նիստը չի կայացել և հետաձգվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նշված հիմքով, այն է՝ առկա են դատավորի առողջական վիճակի հետ կապված կամ այլ հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում դատարանի կողմից գործի քննությունը: 12.01.2021 թվականի դատական նիստը Դատարանը որոշել է հետաձգել՝ հնարավորություն տալով իրավասու մարմին Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնին իրականացնել երեխայի և երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը հավակնող անձանց կյանքի պայմանների հետազոտություն: 24.02.2021 թվականին հրավիրված նախնական դատական նիստը հետաձգվել է՝ հնարավորություն տալով հայցվոր (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերի ներկայացուցիչ Ալինա Ավետիսյանին ծանոթանալու քաղաքացիական գործի նյութերին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վերջինս իր լիազորություններն ստանձնել է 24.02.2021 թվականին: 14.04.2021 թվականի դատական նիստը հետաձգվել է հայցվոր (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ապահովելու և կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքի ապահովման նկատառումներից ելնելով, քանի որ հայցվոր (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերը, ներկայանալով 14.04.2021 թվականին հրավիրված նախնական դատական նիստին, հայտնել է, որ հրաժարվել է իր բոլոր չորս ներկայացուցիչների կողմից մատուցվող ծառայություններից այն հիմնավորմամբ, որ սույն քաղաքացիական գործն ունի միջազգային բնույթ և ինքը ցանկանում է օգտվել միջազգային իրավունքին տիրապետող փաստաբանի ծառայություններից: Ընդ որում՝ դատական նիստի արձանագրության հետազոտմամբ Դատարանը պարզել է, որ նախագահող դատավորը հորդորել է հայցով (հակընդդեմ հայցով պատասխանող) Էլիզա Հովսեփի Լոեբերին բացառել նմանօրինակ իրավիճակները՝ շեշտադրելով, որ նախորդ դատական նիստը հետաձգվել էր նույն հիմքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործի քննության ժամկետը սույն գործով հայցադիմումը Դատարան ներկայացվելու օրվա՝ 28.04.2021 թվականի դրությամբ կազմել է շուրջ երեք տարի, իսկ գործով վերջնական դատական ակտ դեռևս կայացված չէ:

Հաշվի առնելով թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործի քննության ընդհանուր սահմանները և բնույթը, ինչպես նաև ապացույցների բնույթն ու քանակը՝ այն, ընդհանուր առմամբ, որոշակի բարդություն է ունեցել, թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործի քննության ընթացքում ներկայացվել է հայց և հակընդդեմ հայց, առնվազն մեկ նիստով հայցվորը և հակընդդեմ հայցվորը, իրացնելով իրենց դատավարական իրավունքը, միջնորդել են դատական նիստը հետաձգել, իսկ երեք դատական նիստեր հետաձգվել են՝ պայմանավորված կողմերի բացակայությամբ, և միայն երեք դատական նիստ չի կայացել և հետաձգվել է Դատարանի կազմակերպչական խնդիրներով պայմանավորված, դրանցից երկուսը՝ դատավորի առողջական վիճակի հետ կապված կամ այլ հարգելի հանգամանքներով, որոնք անհնար են դարձրել դատարանի կողմից գործի քննությունը և մեկ դատական նիստ՝ այլ քաղաքացիական գործով արտագնա դատական նիստ անցկացնելու հանգամանքով պայմանավորված: Այդուհանդերձ, գործի քննության որոշակի ձգձգումները ևս պետք է լինեն ողջամիտ և արդարացված այնքանով, որ չհանգեցնեն դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքների և ազատությունների էական սահմանափակումների ու խախտումների:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարաններն իրավացիորեն արձանագրել են, որ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործով չեն պահպանվել գործի քննության ողջամիտ ժամկետները, որոնց նախատեսումը օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ. ժամկետ նախատեսելով՝ օրենսդիրը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ երաշխավորել տվյալ իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ապահովել իրավահարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, ինչպես նաև կանխել և բացառել «կամայականության վտանգ»-ը՝ տալով համապատասխան սուբյեկտներին իրենց վարքագիծն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու գործնական հնարավորություն:

Անդրադառնալով սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից սահմանված ոչ նյութական վնասի հատուցման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ/29721/02/18 քաղաքացիական գործը, հարուցված լինելով 18.12.2018 թվականին, սույն որոշման կայացման պահին տևելով շուրջ վեց տարի և գործի քննությունը ավարտված չլինելով, հայցվորին պահել է լարված վիճակում՝ պայմանավորված երեխաների բնակության վայրը որոշելու հեռանկարով: Ավելին, նշված գործով երեխաների բնակության վայրը իր բնակության վայրում սահմանվելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ ստանալու օրինական սպասելիքով պայմանավորված՝ Հայցվորն անընդմեջ սպասել և շարունակում է սպասել իր գործի ելքին, գործի երկարատև քննության արդյունքում հայցվորի մոտ առկա է երեխաների բնակության վայրի որոշման հետ կապված հարցով անորոշություն, ինչն էլ իր հերթին առաջացրել է հոգեկան տառապանք: Հոգեկան տառապանքը կարող է դրսևորվել անհանգստության կամ հիասթափության տեսքով, որը արժանի է փոխհատուցման (տե՛ս KRPELÍK ընդդեմ Չեխիայի Հանրապետության թիվ 23963/21 գանգատով Եվրոպական դատարանի 12.06.2025 թվականի վճիռ, կետ 103): Տվյալ դեպքում, չափազանց երկար արդարադատությունը ոչ միայն դառնում է անարդյունավետ, այլ նաև՝ անձի մոտ առաջացնում

է անվստահություն՝ ակնկալվող իրավական հետևանքների նկատմամբ, և հիասթափություն՝ պետական ինստիտուտի նկատմամբ, որի մարմնացումն է դատարանը՝ արդարադատություն իրականացնելիս:

Պայմանավորվող պետությունները պարտավորվում են իրենց դատական համակարգերն այնպես կազմակերպել, որ դրանց դատարանները կարողանան բավարարել դրանով սահմանված պահանջներից յուրաքանչյուրը, այդ թվում՝ գործով լսումների իրականացումը՝ ողջամիտ ժամկետներում: Եթե դատական համակարգն այս առումով թերի է, ապա ամենաարդյունավետ լուծումը վարույթի չափից ավելի երկարաձգումը կանխարգելելու նպատակով այն արագացնելու համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցի նախատեսումն է: (...) Միևնույն ժամանակ վարույթի ընթացքն արագացնելուն ուղղված իրավական պաշտպանության միջոցը չի կարող բավարար լինել այնպիսի իրավիճակը կարգավորելու համար, որի դեպքում վարույթն ակնհայտորեն չափազանց երկար է եղել: Նման իրավիճակում խախտումը կարող է պատշաճորեն վերացվել իրավական պաշտպանության միջոցների տարբեր տեսակների տրամադրմամբ, ներառյալ՝ փոխհատուցման ձևով իրավական պաշտպանության միջոցը (տե՛ս «ՖԻԼ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 18526/13 գանգատով Եվրոպական դատարանի 31.01.2019 թվականի վճիռ, կետ 47): Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանը հանգում է այնպիսի հետևության, որ հիմնարար իրավունքի խախտմամբ պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման, որը բխում է Կոնվենցիայի պահանջներից:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը կայացնելիս թույլ է տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը:

<u>5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված

դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Մինչև 30.10.2021 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի բովանդակությունից բխում է, որ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ դրամական պահանջով հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից:

Նույն հոդվածի 6-րդ կետի «ա» ենթակետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափով՝ դրամական պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի երեք տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով:

Նույն հոդվածի 7-րդ կետի «ա» ենթակետի բովանդակությունից բխում է, որ վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափով՝ դրամական պահանջի գործերով՝ հայցագնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը մերժվում է՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնվում է օրինական ուժի մեջ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վերաքննիչ դատարանի 31.03.2023 թվականի որոշմամբ դատական ծախսերի բաշխման հարցը լուծված լինելու՝ Նախարարությունից հօգուտ Ալեքսիս Լոեբերի 14.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, 25.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, բռնագանձման ենթակա լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանում և Վերաքննիչ դատարանում դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ բողոք բերած անձը վճարել է վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, գտնում է, որ դատական ծախսերի հարցը այդ մասով պետք է համարել լուծված:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական այլ ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պայմաններում այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.03.2023 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող ***Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ***

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ